Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» *պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

«Գիտական Արցախ» *պարբերականը կետեղված է www.elibrary.ru կայքում:*

*The **«Scientific Artsakh»** journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The **«Scientific Artsakh»** journal is posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Լենա ԱՍՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ISSN 2579-2652

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2020

Published by the Yerevan State University Academic Council Decision

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN,** Ph.D in Philology, Associate Professor

Members:
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Издается решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: **Арам СИМОНЯН,** директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: **Теймина МАРУТЯН,** кандидат филологических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

Էլինա Միրզոյան. «Թուրք երեխաների առևանգում և բռնի քրիստոնեացում»-ը՝ թրքական գիտատեղեկատվական զեղծարարություն.....156
Elina Mirzoyan. «Abduction and Forced Christianization of the Turkish Children» as the Turkish Scientific and Information Falsification
Элина Мирзоян. «Похищение и насильственная христианизация турецких детей» как турецкая научно-информационная фальсификация

Լիանա Պետրոսյան. Մ. Ահմադինեժադի դեմ ուղղված բողոքները. «Կանաչ շարժում».....175
Liana Petrosyan. Protests Against M. Ahmadinejad: «The Green Movement»
Лиана Петросян. Протесты против М. Ахмадинежада: «Зеленое движение»

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Ազատ Դավթյան. Դիտարկումներ Հայաստանի տնտեսության զորահավաքային ներուժի ընդլայնման վերաբերյալ.....184
Azat Davtyan. Observations on the Expansion of Mobilizational Potential of the Economy of Armenia
Азат Давтян. Наблюдения по расширению мобилизационного потенциала экономики Армении

Լիանա Իսայան. Սոցիալական կապիտալի գնահատման տարբեր մոտեցումները որպես հարցումների այլընտրանք.....195
Liana Isayan. Different Approaches to the Valuation of Social Capital as an Alternative to Surveys
Лиана Исаян. Различные подходы к оценке социального капитала как альтернатива опросам

Սոս Խաչիկյան. Կառավարման էլեկտրոնային համակարգերի ներդրման անհրաժեշտությունը ինքնակազմակերպվող պետական միավորների միջազգայնացման համատեքստում.....204
Sos Khachikyan. The Need of Electronic Management Systems Implementation in the Context of Internationalization of State Self-Organizing Entities
Сос Хачикян. Необходимость внедрения электронных систем управления в контексте интернационализации государственных самоорганизующихся образований

Լիլիթ Խուրշուդյան. Հայաստանի և հարևան երկրների ռազմական հզորության գնահատում.....214
Lilit Khurshudyan. Military Power Assessment of Armenia and Neighboring Countries
Лилит Хуршудян. Оценка военной мощи Армении и соседних стран

Հռիփսիմե Հովսեփյան. ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի հիմնահարցեր.....222
Hripsime Hovsepyan. Public Sector Internal Audit Issues in Armenia
Рипсиме Овсепян. Вопросы внутреннего аудита общественного сектора Республики Армения

Արմինե Սչանյան. Հանրության պահանջը և սոցիալական բնակարանաշինարարությունը ՀՀ-ում.....236
Armine Schanyan. Public Demand and Social Housing Construction in the RA
Армине Счанян. Требования общества и социальное жилищное строительство в РА

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ*

ՀՏԴ 330.1

ԼԻԱՆԱ ԻՍԱՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Liana.isayan@mail.ru

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել սոցիալական կապիտալի գնահատման տարբեր մոտեցումներն իրենց ողջ բազմազանությամբ և դրանց գծով իրականացնել որոշակի գործնական փորձարկումներ: Հետազոտության խնդիրներն են՝ դիտարկել սոցիալական կապիտալի գնահատումը հարցումների միջոցով և գնահատման տարբեր խմբերի անդամակցության ցուցանիշը, ցանցային կապերի մոտեցմամբ իրականացնել սոցիալական կապիտալի գնահատման փորձեր միկրո, մեզո, մակրո և գլոբալ մակարդակներում, ինչպես նաև ներկայացնել գնահատման՝ մեր կողմից առաջարկվող նոր մոտեցում՝ COVID-19-ի տվյալների հիման վրա, ներկայացնել գնահատման այլ մոտեցումներ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են գրաֆիկական վերլուծության ու համադրման, տվյալների կանգվածների վիճակագրական վերլուծության, պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության, վերլուծության մաթեմատիկա-վիճակագրական և կոռելյացիայի մեթոդները:

Վերլուծության արդյունքում արձանագրել ենք, որ այս բարդ հասկացության գնահատման մոտեցումների բազմազանության մեջ հետազոտողը ընտրություն կատարելիս պետք է առաջնորդվի՝ ելնելով հետազոտության նպատակից, իսկ այն որպես մակրոտնտեսական ցուցանիշ դիտարկելու և վերլուծություններում կիրառելու լավագույն տարբերակը, մեր կարծիքով, շարունակում է մնալ հարցումների տարբերակը:

Հիմնաբառեր՝ *սոցիալական կապիտալ, ցանցային կապեր, գնահատման մոտեցում, ինդեքս, փոխկապվածություն, առևտրային ցանց, բանկային ցանց, COVID-19, խաղերի տեսություն:*

Բարդ և ընդգրկուն սոցիալական կապիտալ հասկացությունը, որպես տնտեսական արդյունքների վրա որոշակի ազդեցություն ունեցող վստահության, նորմերի, կապերի և այլ տարրերի ամբողջություն, ունի այնքան բազմաթիվ բնորոշումներ ու գնահատման մոտեցումներ, որ որոշ հեղինակներ իրականացնում են մոտեցումների խմբավորում[548]: Այդ բազմազանության մեջ չնայած սոցիալական կապիտալի գնահատման ամենատարածված մոտեցումը շարունակում է մնալ դրա իրականացումը հարցումների միջոցով, գոյություն ունեն այն չափելի դարձնելու բազմաթիվ այլ մոտեցումներ:

---

* Հոդվածը ներկայացվել է 15.05.2020թ., գրախոսվել՝ 16.05.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:

[548] Տե՛ս **Մայիլյան Ֆ.**, Մարդկային կապիտալի իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ե., հեղ. հրատ., 2018, 381 էջ:

Սոցիալական կապիտալի գնահատումը հարցումների միջոցով

Հարցումների միջոցով սոցիալական կապիտալի գնահատումը իրականացվում է վերջինիս տարրերին վերաբերող՝ վստահություն, համագործակցություն, ցանցային կապեր, նորմեր և այլն, հարցերին տրվող պատասխանների հիման վրա: Աշխարհում իրականացվում են բազաթիվ նմանատիպ հարցումներ, որոնցից են ստորև մեր կողմից դիտարկված Լիգաթում բարգավաճման ինդեքսը, Համաշխարհային արժեքների հարցումը և Կովկասյան բարոմետրը:

Աղյուսակ 1. ՀՀ-ում սոցիալական կապիտալի մակարդակը՝ համաձայն մի շարք հարցումների արդյունքների[549]

Լիգաթում բարգավաճման ինդեքս, 2019		Լիգաթում բարգավաճման ինդեքս, 2015		Համաշխարհային արժեքների հարցում, index 1	
միավոր	*դիրք*	*միավոր*	*դիրք*	*միավոր*	*դիրք*
50.9	75/167	41.1	143//167	0.56	45/60
Համաշխարհային արժեքների հարցում, index 2		**Կովկասյան բարոմետր, index 1**		**Կովկասյան բարոմետր, index 2**	
միավոր	*դիրք*	*միավոր*	*դիրք*	*միավոր*	*դիրք*
0.52	49/60	0.42	2/2	0.39	2/2

Այս մոտեցմամբ գնահատման արդյունքների համաձայն՝ ՀՀ-ն հետհեղափոխական ժամանակահատվածում սոցիալական կապիտալի ցուցանիշի գծով նշանակալի առաջնթաց է գրանցել՝ առավելապես պայմանավորված պետական ինստիտուտների և մասնավորապես կառավարության նկատմամբ վստահության աճով:

Կան սոցիալական կապիտալի գնահատման մի շարք այլ մոտեցումներ: Այսպես, Ռ. Փութնամը, օրինակ, փորձում է սոցիալական կապիտալը չափել՝ հաշվելով տարբեր խմբերի (սպորտային ակումբներ, բոուլինգի լիգաներ, գրական ակումբներ, քաղաքական ակումբներ և այլն) քանակը հասարակության մեջ և դրանց անդամակցության **n** չափերը[550]: Շարժվելով այս մոտեցմամբ՝ Համաշխարհային արժեքների հարցման չմշակված արդյունքների հիման վրա հաշվարկել ենք խմբերին անդամակցության ցուցանիշը[551]:

Աղյուսակ 2. ՀՀ-ում սոցիալական կապիտալի մակարդակը՝ ըստ սոցիալական կապիտալի գնահատման Ռ. Փութնամի մոտեցման[552]

Ինդեքս /հարցում	Դաշտային աշխատանքներ	ՀՀ ցուցանիշ	Դիտարկված երկրների միջին	ՀՀ դիրք	Երկրների քանակ
Անդամակցության ցուցանիշ	2010-2014 թթ.	0.27	1.71	58	60

[549] Ինդեքսների հաշվարկման մեթոդաբանությունը տե՛ս **Իսայան. Լ.**, Սոցիալական կապիտալի էությունը, գնահատման մոտեցումներն ու փաստացի մակարդակը ՀՀ-ում, Բանբեր ՀՊՏՀ, 2020 N1, Տնտեսագետ հրատ., Երևան 2020, էջ 9-24, https://asue.am/upload/files/science/banber/2020-year-1/2020.1.pdf:

[550] Տե՛ս **Fukuyama F.**, Social Capital and Civil Society. IMF WP. 2000. էջ 13:

[551] Տե՛ս **Իսայան. Լ.**, Սոցիալական կապիտալի էությունը, գնահատման մոտեցումներն ու փաստացի մակարդակը ՀՀ-ում, Բանբեր ՀՊՏՀ, 2020 N1, Տնտեսագետ հրատ., Երևան 2020, էջ 9-24, https://asue.am/upload/files/science/banber/2020-year-1/2020.1.pdf:

[552] Տե՛ս նույն տեղում:

Նշենք, որ համաձայն արդյունքների՝ ՀՀ-ն դիտարկված 60 երկրների շարքում 58-րդն է, ինչը բացատրվում է եկամուտների ցածր մակարդակով (հարցվողների 80,6%-ը (կշռված) ՀՀ-ի դեպքում եկամտային 1-ից 5 խմբերին է պատկանում, իսկ աշխարհում այդ խմբերին է պատկանում 60,1%-ը), տնային տնտեսուհիների և թոշակառուների մեծ տեսակարար կշռով և 16-ից 30 տարեկանների փոքր տեսակարար կշռով[553]:

Ցանցային կապերի մոտեցում

Սոցիալական կապիտալը ցանցային կապերի մոտեցմամբ դիտարկելու դեպքում այն կարող է չափվել այլ ձևերով ևս:



Գծապատկեր 1. ԱՄՆ հումք-արտադրանք տվյալների մատրիցի համապատասխան միջոլոտային ցանցը[554]

Օրինակ՝ հայտնի հայազգի տնտեսագետ Դ. Աճեմօղլուն և համահեղինակները ԱՄՆ տնտեսության ցանցային կապերը իրենց աշխատանքներից մեկում դիտարկել են միջֆիրմային հումք-արտադրանք կապերի վերաբերյալ տվյալներով:

ՀՀ-ի համար այսպիսի տվյալների բացակայության պատճառով սույն աշխատանքում նման հետազոտություն փորձենք կատարել ՀՀ-ի միջազգային առևտրային ցանցի համար՝ դիտարկելով ՀՀ-ից արտահանման վիճակագրությունը, ինչն արդեն կհանդիսանա գլոբալ սոցիալական կապիտալի գնահատման փորձ[555]: Գծապատկեր 2-ի ձախ հատվածում տեսնում ենք 2018թ.-ին ՀՀ-ի արտահանման գլխավոր ուղղություն 20 երկրները և նրանցից յուրաքանչյուրից արտահանման գլխավոր ուղղություն 5 երկրները, իսկ աջ հատվածում տեսնում ենք այդ 20 երկրներից յուրաքանչյուրից արտահանման գլխավոր ուղղություն 20 երկրները:

---

[553] Տե՛ս նույն տեղում:

[554] Տես **Acemoglu D., Carvalho V. M., Ozdaglar A., Tahbaz-Salehi A**., "The Network Origins of Aggregate Fluctuations", Econometrica, Vol. 80, No. 5 (September, 2012), էջ 1980:

[555] Սոցիալական կապիտալի սահմանումների լայն բազմազանության մեջ որոշակի հստակություն մտցնելու նպատակով հասկացությունը որոշ հեղինակների կողմից առաջարկվում է դիտարկել միկրո, մեզո և մակրո մակարդակներում (երբեմն ավելացվում է նաև գլոբալ մակարդակը), կամ սահմանումների ցանցային կապեր, ինստիտուցիոնալ մոտեցում, համայնքային մոտեցում և սիներգետիկ մոտեցում խմբավորմամբ: Տե՛ս **Մայիլյան Ֆ**., Մարդկային կապիտալի իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ե., հեղ. հրատ., 2018, 381 էջ:



Գծապատկեր 2. ՀՀ-ի արտահանման գլխավոր 20 ուղղությունները, 2018[556]

Այս փոքրիկ վերլուծությունը մեզ տալիս է հետևյալ ինֆորմացիան. համաշխարհային գերուժերը՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Չինաստանը, Եվրոպան (Գերմանիա և Նիդերլանդներ), կենտրոնական դեր ունեն նաև մեր արտահանման ցանցում: Կարևոր է նշել, որ երբ համեմատում ենք արտահանման մեր ցանցը Վրաստանի ցանցի հետ, տեսնում ենք, որ 20 գործընկեր երկրներից 16-ը համընկնում են: Նշենք սակայն, որ Վրաստանի արտահանման ցանցն ունի ավելի բարձր խտություն[557]՝ 0.52-ը ընդդեմ Հայաստանի 0.45-ի, ինչը նշանակում է ավելի շատ փոխկապակցված հանգույցներ (ՀՀ՝ 171 կապ, Վրաստան՝ 199 կապ), ինչն իր հերթին սովորաբար ենթադրում է գործընթացների արագություն: Եվ իրոք, երբ նայում ենք վերաարտահանման տվյալներին, տեսնում ենք, որ Վրաստանից վերաարտահանումը 5 անգամ գերազանցում է ՀՀ-ից վերաարտահանմանը այն դեպքում, երբ Վրաստանի արտահանումը ընդամենը 1,4 անգամ է գերազանցում ՀՀ արտահանմանը: Սա, իհարկե, պայմանավորված է նաև աշխարհաքաղաքական պատճառներով, սակայն ցանցի խտությունը ևս կարող է դեր խաղալ (վերջինս ևս կարող է պայմանավորված լինել աշխարհաքաղաքական գործոններով):

Մեկ այլ հայտնի տնտեսագետ Թ. Լյուքսը դիտարկել է բանկերի և խոշոր ընկերությունների միջև այսպես կոչված վարկային ցանցը՝ տրամադրվող վարկերի փաստացի տվյալների հիման վրա[558]: Ոգեշնչվելով Թ. Լյուքսի ուսումնասիրությունից՝ իրականացրել ենք ՀՀ-ի վճարահաշվարկային կազմակերպությունների բանկային

---

[556] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ comtrade.un.org տվյալների հիման վրա (հղման ժամանակահատվածը՝ 2018 թ.) և R ծրագրավորման լեզվի միջոցով: Մասնավորապես, օգտագործված գրադարաններն են (libraries)՝ ggplot2, igraph, dplyr և data.table, իսկ հիմնական ֆունկցիաները՝ graph_from_data_frame և plot: R Core Team (2019). R: A language and environment for statistical computing. R Foundation for Statistical Computing, Vienna, Austria. URL https://www.R-project.org/:

[557] Ցանցային կապերի տեսության մեջ ցանցի «խտությունը» առկա կապերի հարաբերական ցուցանիշ է և պարզապես հաշվարկվում է որպես ցանցի միջին «աստիճան»՝ բաժանած n-1-ի: Իսկ մեկ հանգույցի «աստիճանը» այն կապերի քանակն է, որոնք ներառում են տվյալ հանգույցը: Տե՛ս **Jackson M. O.,** Social and Economic Networks, 2008 Draft, Princeton University Press, էջ 51:

[558] Տե՛ս **Lux T.**, A Model of the Topology of the Bank-Firm Credit Network and its Role as Channel of Contagion, Kiel Working Paper No. Kiellinie 66, 24105 Kiel, Germany. Paper number 1950, August 2014:

համագործակցային ցանցի վերլուծություն՝ որպես ցանցային կապերի մեզոմակարդակի վերլուծության օրինակ:



Գծապատկեր 3. ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների բանկային ցանցը[559]

Հանգույցի մեծությունը ցույց է տալիս յուրաքանչյուր վճարահաշվարկային կազմակերպության բանկային համագործակցային ցանցի մեծությունը: Ինչպես նկատում ենք, ամենամեծ համագործակցային ցանցն ունի Իզիփեյը, իսկ ամենափոքրը՝ Մոբիդրամը: Աղեղների թավությունը ցույց է տալիս համագործակցության սերտությունը, այսինքն՝ թե որքան արագ են գործարքներն իրականացվում: Օրինակ՝ Իզիփեյի համագործակցային ցանցում թավ գծերով նշված են բանկերը, որոնց գործարքները կատարվում են նույն օրը, իսկ բարակ գծով բանկերը, որոնց գործարքները կատարվում են 2 աշխատանքային օրում: Գծապատկեր 3-ի աջ անկյունում կարող ենք տեսնել համակարգի ամբողջական ցանցը, ինչը մեզ տալիս է հետևյալ ինֆորմացիան. Արմսվիս բանկը համագործակցում է միայն մեկ վճարահաշվարկային կազմակերպության՝ Իզիփեյի հետ:

Սոցիալական կապիտալի գնահատման ցանցային կապերի մոտեցման շրջանակում այն դիտարկվում է որպես սուբյեկտների (nodes) միջև կապեր կամ հարաբերություններ (links): Այս մոտեցմամբ սոցիալական կապիտալը կարող է դիտարկվել տարբեր սուբյեկտների համար՝ ֆիզիկական անձինք, կազմակերպություններ, ոլորտներ, երկրներ (այսպես կոչված միկրո, մեզո և մակրո մակարդակներ): Միկրո մակարդակում սոցիալական կապիտալը մեկ անձի կապերի ցանցն է, ինչպես, օրինակ, Facebook-ի տվյալների հիման վրա ստացված կապերի իմ անձնական ցանցն է:

Այս վիզուալիզացիան կարող է կապերի իմ ցանցի մասին բավականին շատ տեղեկատվություն տալ: Կարող ենք տեսնել, օրինակ, որ իմ ցանցը բաղկացած է 2 ենթացանցերից (ընտանիք-այլ, աշխատանք-համալսարան-այլ), և որ 14-րդ հանգույցը կենտրոնական դեր ունի կապերի ցանցում (նա ունի կապերի ամենաբարձր

[559] Կառուցվել է հեղինակի կողմից՝ ըստ յուրաքանչյուր վճարահաշվարկային կազմակերպության պաշտոնական կայքում առկա տեղեկատվության (19.01.2020-ի դրությամբ) և R ծրագրավորման լեզվի միջոցով:

«աստիճանը»՝ կապակցված հանգույցների քանակը): Նշենք սակայն, որ մակրո մակարդակում այս մոտեցմամբ սոցիալական կապիտալը գնահատելու համար անհրաժեշտ կլիներ հասանելիություն ունենալ Facebook-ի տվյալների ողջ բազային:



Գծապատկեր 4. Հեղինակի թոփ 20 ֆեյսբուքյան ընկերներն ու նրանց միջև փոխկապակցվածությունը[560]

Սոցիալական կապիտալը և COVID-19-ը

Մեր կողմից առաջարկվում է սոցիալական կապիտալի գնահատման մեկ այլ նոր մոտեցում վերջերս ամենաքննարկվող COVID-19-ի տվյալների միջոցով: Մասնավորապես հայտնի փաստ է, որ վարակը տարածվում է մերձ շփման միջոցով, ինչի պատճառով նոր հիվանդի հայտնաբերման դեպքում առաջնահերթ պարզվում ու ստուգվում է նրա սերտ շփման շրջանակը: Որքան շատ մարդու հետ է վարակակիրը շփվում, այնքան վարակը տարածվում է ավելի արագ: Հետևություն. որքան ավելի շփվող է տվյալ երկրի բնակչությունը, և որքան ավելի մեծ շփման ցանց ունեն տվյալ երկրի բնակիչները, այնքան, ըստ առաջ քաշվող հիփոթեզի, վարակը կտարածվի ավելի բարձր արագությամբ: Ասվածը ստուգելու համար դիտարկենք կապը ա) սոցիալական կապիտալի՝ Լիգաթում բարգավաճման ինդեքս 2019-ից վերցված ցուցանիշի և կորոնավիրուսով վարակվածների վիճակագրության (գծապատկեր 5-ի ձախ հատված) և բ) ցանցային կապերի՝ Լիգաթում բարգավաճման ինդեքս 2019-ից վերցված ցուցանիշի և կորոնավիրուսով վարակվածների վիճակագրության միջև (գծապատկեր 5-ի աջ հատված):

Արձանագրենք, որ 1 մլն բնակչին ընկնող վարակակիրների քանակը միջին սերտության դրական կոռելյացիա ունի սոցիալական կապիտալի և ցանցային կապերի ցուցանիշների հետ: Հաշվարկները կատարել ենք 19.03.2020թ., 14.04.2020թ. և 01.05.2020թ. դրությամբ վարակակիրների տվյալներով, և կոռելյացիոն կապը բոլոր դիտարկված ամսաթվերին գրեթե նույնական է՝ տատանվելով համապատասխանաբար 0,4-0,5 և 0,25-0,3 միջակայքերում[561]: Հետաքրքիր է, որ երբ ըստ երկրների դիտարկում

[560] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ Facebook-ի տվյալների օգտագործմամբ և R ծրագրավորման լեզվի միջոցով:

[561] Հաշվարկել ենք նաև կապը COVID-19-ի տարածման արագությունը բնութագրող մի շարք այլ ցուցանիշների հետ՝ վիրուսակիրների աճի միջին տեմպ, վերջին օրվա դրությամբ աճի տեմպ, մաքսիմում բացարձակ փոփոխություն, երկրաչափական պրոգրեսիայով աճի հայտարար, թվաբանական պրոգրեսիայով աճի տարբերություն և այլն, սակայն կապը առավելապես նկատելի է միայն 1 մլն բնակչի հաշվով վարակակիրների ցուցանիշի դեպքում:

ենք կապը 1մլն բնակչին ընկնող վարակակիրների քանակի ու վարակի տարածմանը նպաստող հավանական այլ գործոնների հետ, ինչպիսիք են՝ բնակչության խտությունը, տուրիզմը, ուղևորահոսքը, արձանագրվում է կոռելյացիոն կապի շատ ավելի ցածր ցուցանիշ (0.04-0.16)[562]: Նշենք, որ եթե համաշխարհային համաճարակի հանդարտվելուց հետո առողջապահական կառույցները տրամադրեն այս ամենի վերաբերյալ ավելի բացված վիճակագրություն՝ ըստ տարածքների, վարակակիրների անձնական տվյալների ու փոխկապակցվածությունների, սոցիալական կապիտալի հետազոտության տեսանկյունից շատ արժեքավոր տեղեկատվություն կլինի:



Գծապատկեր 5. Կապը մի կողմից սոցիալական կապիտալի ու ցանցային կապերի և մյուս կողմից 1մլն բնակչին ընկնող վարակակիրների քանակի միջև[563]

Սոցիալական կապիտալի գնահատման այլ մոտեցումներ

Սոցիալական կապիտալի գնահատման մոտեցումների բազմազանությանը վերադառնալով՝ նշենք, որ կան մի շարք այլ մոտեցումներ ևս: Օրինակ՝ Ֆ. Ֆուկույաման կազմակերպության սոցիալական կապիտալի օրինակով առաջարկում է սոցիալական կապիտալի գնահատման մեկ այլ մոտեցում: Ըստ հեղինակի՝ սոցիալական կապիտալը համարժեք է նոր մենեջմենթի ավելի լավ համակարգման՝ շնորհիվ ծախսերի հավանական տնտեսմանը, որը վաճառվող կազմակերպությունը գնելու հիմնական մոտիվացիան է, և որը մարմնավորվում է կազմակերպության մենեջմենթի և աշխատողների մեջ[564]:

Սոցիալական կապիտալի գնահատման կիրառական մոտեցումներից է նաև դրա կատարումը խաղերի տեսության միջոցով: Այս պարագայում փորձ է արվում ընտրանքային խմբերում դիտարկել մասնակիցների իրական վարքագիծը: Նման ուսումնասիրության լավագույն օրինակներից է ցանցային կապերի տեսության խոշորագույն ներկայացուցիչներից Ռ. Կրանտոնի և համահեղինակ Ս. Սանդերսի կողմից իրականացված գիտափորձը, որի ընթացքում մասնակիցներին առաջադրվում է տրվող գումարը բաժանել իրենց և մյուս մասնակիցների միջև: Արդյունքները ցույց են տալիս, որ որոշ մասնակիցների շրջանում դրսևորվում է «խմբային» վարքագիծ՝ մեծ մասով կիսվելով խմբակիցների հետ և փոքր մասով՝ մյուսների, իսկ որոշները

---

562 Գնահատման այս մոտեցման վերաբերյալ առավել խորը և համակողմանի վերլուծություն հրապարակման է նախատեսվում առաջիկայում՝ «Սոցիալական կապիտալը և COVID-19-ի տարածումը» վերատառությամբ հոդվածի տեսքով:

563 Կառուցել ենք՝ օգտվելով հետևյալ աղբյուրներից՝ https://www.worldometers.info/coronavirus/#countries՝ 19.03.2020 թ. դրությամբ, https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/situation-reports, https://www.prosperity.com/about/resources՝ հղման ժամանակահատվածը 2018 թ.:

564 Տե՛ս **Fukuyama F.**, Social Capital and Civil Society, IMF WP, 2000, էջ 13:

դրսևորվում են «ոչ խմբային» վարքագիծ: Նշենք, որ երբեմն տվյալների հավաստիության տեսանկյունից հարցումներին հակադրվող այս մոտեցումը, մեր կարծիքով, առավել արդյունավետ է հակադրելու փոխարեն համադրել հարցումների հետ, ինչպես, օրինակ, իրականացվել է Ռ. Կրանտոնի և Ս. Սանդերսի մեջբերված հետազոտությունում[565]:

Այսպիսով՝ ինչպես տեսանք, գոյություն ունեն սոցիալական կապիտալի գնահատման բազմաթիվ հայտնի ու անհայտ մոտեցումներ, որոնց բազմազանությունը, մեր կարծիքով, բխում է հասկացության բարդ ու ընդգրկուն բովանդակությունից՝ միկրո մակարդակից մինչև գլոբալ մակարդակի սոցիալական կապիտալ, սահմանման ցանցային կապերի մոտեցումից մինչև ինստիտուցիոնալ մոտեցում, իսկ այդ բազմազանության մեջ հետազոտողը գնահատման մոտեցում ընտրելիս պետք է առաջնորդվի՝ ելնելով հետազոտության նպատակից: Արձանագրենք նաև, որ սոցիալական կապիտալը որպես մակրոտնտեսական ցուցանիշ դիտարկելու, այն տնտեսական տարբեր ցուցանիշների հետ համադրելու և ժամանակի մեջ վերլուծելու և համեմատություններ կատարելու համար լավագույն տարբերակը, մեր կարծիքով, շարունակում է մնալ հարցումների տարբերակը՝ հաշվի առնելով հասարակությունը բնութագրող ընտրանքներ կազմելու հնարավորությունը, այս մոտեցմամբ գնահատելու ժամանակային շարքերի առկայությունն ու տվյալների մատչելիությունը:

DIFFERENT APPROACHES TO THE VALUATION OF SOCIAL CAPITAL AS AN ALTERNATIVE TO SURVEYS

LIANA ISAYAN
Armenian State University of Economics,
Chair of Economic Theory, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia

The purpose of this article is to present the different approaches to the valuation of social capital in all their diversity and to conduct some practical experiments on them. The objectives of the study are to consider the assessment of social capital through surveys and the index of membership in different groups, to conduct experiments with social network approaches at the micro, meso, macro and global levels, as well as to propose a new approach to the valuation of social capital based on COVID-19 data and to present other approaches to its valuation.

The studies were carried out using the methods of graphical analysis and comparison, statistical analysis of data masses, the study of causal relationships, mathematical-statistical and correlation analysis.

The analysis resulted in the conclusion that with a variety of approaches to the evaluation procces of this complex concept a researcher should be guided by the purpose of the research, and in our opinion, the best way to view it as a macroeconomic indicator and to use it in analysis is still to do so through surveys.

Keywords: *social capital, network connections, valuation approach, index, interconnection, trade network, banking network, COVID-19, game theory.*

[565] Հեղինակները գիտափորձի մասնակիցներին նախապես տալիս են ժողովրդագրական, հոգեբանական և այլ հարցեր: Հոդվածը տե՛ս **Kranton R. E., Sanders S. G.**, Groupy vs. Non-Groupy Social Preferences: Personality, Region, and Political Party. May 2017, էջ 1-2 https://sites.duke.edu/rachelkranton/files/2017/01/Kranton-Sanders-AERPP-May-2017.pdf:

РАЗЛИЧНЫЕ ПОДХОДЫ К ОЦЕНКЕ СОЦИАЛЬНОГО КАПИТАЛА КАК АЛЬТЕРНАТИВА ОПРОСАМ

ЛИАНА ИСАЯН
аспирант кафедры экономической теории
Армянского государственного экономического университета,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – представить различные подходы к оценке социального капитала во всем их многообразии и на их основе провести практические эксперименты. Задачи исследования: рассмотреть оценку социального капитала на основе опросов и индекса членства в различных группах, провести эксперименты с обращением к сетевым связям на микро-, мезо-, макро- и глобальном уровнях, а также предложить новый подход к оценке социального капитала на основе данных COVID-19 и представить другие подходы к его оценке.

Исследования проводились с использованием методов графического анализа и сравнения, статистического анализа масс данных, изучения причинно-следственных связей, математического статистического и корреляционного анализа.

В результате анализа мы пришли к выводу, что при сложном многообразии выбора подходов к оценке этого сложного понятия исследователь должен руководствоваться целью исследования;, и, по нашему мнению, лучшим вариантом его рассмотрения как макроэкономического показателя и применения при анализе остается вариант опросов.

Ключевые слова: *социальный капитал, сетевые контакты, оценочный подход, индекс, взаимосвязь, торговая сеть, банковская сеть, COVID-19, теория игр.*